ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

15 ԱՊՐԻԼԻ
2026 թ.
№ 6 (1161)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՊՄՀ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողուհիներ, հարգելի՛ դասախոսներ և մանկավարժներ,

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի անունից և անձամբ ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ապրիլի 7-ի՝ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ:

Այս գարնանային տոնը ևս մեկ առիթ է արժևորելու կնոջ անփոխարինելի դերն ինչպես ընտանիքում, այնպես էլ մեր հասարակության կայացման գործում: Մանկավարժի վեհ կոչումն իր էությամբ շատ նման է մայրությանը. երկուսի հիմքում էլ ընկած են անսահման ջերմությունը, սերն ու պատասխանատվությունը՝ սերնդի կրթության և դաստիարակության նկատմամբ:

Մեր համալսարանական մեծ ընտանիքում յուրաքանչյուրդ ձեր մեջ կրում եք այդ ջերմությունը. դուք եք, որ գիտելիքի հետ միասին փոխանցում եք սեր, հոգատարություն և մարդկային արժեքներ: Ձեր ներկայությամբ կրթությունը դառնում է ոչ միայն մասնագիտական ուղի, այլև մարդկային տեսակի ձևավորման գեղեցիկ ընթացք:

Սիրելի՛ ուսանողներ, եղեք համարձակ ձեր նպատակների մեջ: Դուք եք այսօրվա և վաղվա այն մայրերն ու ուսուցիչները, ովքեր ձևավորելու են մեր ապագա քաղաքացուն: Թող ձեր ուսումնառության տարիները լինեն լի գիտելիքով և ստեղծագործական եռանդով:

Սիրելի՛ դասախոսներ և ուսուցիչներ, շնորհակալություն ձեր անմնացորդ նվիրումի համար: Ձեր կերպարով ու տեսակով դուք օրինակ եք ծառայում երիտասարդ սերնդին՝ փոխանցելով ոչ միայն գիտելիք, այլև մարդկային վեհ արժեքներ:

Կինն է աշխարհի սկիզբը և հարատևության երաշխիքը: Ձեր լույսով ու բարությամբ է պայմանավորված մեր երկրի վաղվա օրվա հանդեպ հավատը:

Թող գարնանային այս տոնը ձեր սրտերում վառ պահի ժպիտն ու ջերմությունը:

ՄԱՅՐ

Ռազմիկ Դավոյան

Պատկերիդ հետ զրուցում եմ օրն ի բուն,
Ո՞վ կարող է ինձ ասել, թե դու չկաս.-
Արցունքներս քո ձեռքերով ես սրբում,
Քիչ է մնում՝ իմ փոխարեն հեկեկաս:
Մա՛յր, ամեն օր ինձ մայրություն ես անում,
Բայց քանի՞ օր ես քո զավակը եղա.-
Ցավն իմ հոգուց հառաչանքներ է քամում,
Որ ողոքեմ՝ մա՛յր, քաղցր մայր, քեզ մեղա:
Մեղա սրտիդ, արցունքներիդ, տանջանքիդ,
Մեղա մտքիդ ճառագումին անխափան,
Աղոթքներիդ, մրմունջներիդ ու ջանքիդ,
Քեզանից դուրս հիմա չկա ոչ մի բան:
Որքան էլ որ ապրումներս խորանան,
Քո հայացքի շրջանակից եմ կախված,
Շրթունքներիս՝ քո խոսքերի մանանան,
Հոգիս՝ սիրուդ լռության մեջ թաթախված:
Մա՛յր, ամեն օր ինձ մայրություն ես անում,
Բայց քանի՞ օր ես քո զավակը եղա.-
Ցավն իմ հոգուց հին հառաչանքն է քամում,
Որ ողոքեմ՝ մա՛յր, քաղցր մայր, քեզ մեղա:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՓԱՌԱՏՈՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Մանկավարժական համալսարանում մարտի 6-ին մեկնարկեց Մասնագիտական կողմնորոշմանը նվիրված ամենամյա փառատոնը, որին մասնակցում էին Երևանի և հանրապետության մարզերի 25 դպրոցի 8-12-րդ դասարանների աշակերտներ, դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ, ՀՊՄՀ ղեկավար կազմը և դասախոսներ:

Համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կրթատոնի շրջանակում ողջունեց բոլորին համալսարանի հարկի ներքո՝ հույս հայտնելով, որ աշակերտներից շատերը ընտրելու են մանկավարժական մասնագիտություններ:

«Ուրախ ենք, որ եկել եք ծանոթանալու մեր մասնագիտություններին ու մասնագիտացումներին, և առհասարակ, մարդու դերի ու մասնագիտության մասին: Ձեր ուսուցիչների հետ եկել եք բացահայտելու, հետազոտելու, և ի վերջո, որոշում կայացնելու ձեր ապագայի ամենակարևոր հարցի շուրջ՝ ինչ մասնագիտություն եք ընտրելու»:

Լիլիթ Մկրտչյանը համոզված է՝ այս օրը վճռորոշ է դառնալու աշակերտների համար, և աշակերտներին հորդորեց ընտրության հարցում լինել հետևողական, որովհետև ճիշտ մասնագիտություն ընտրելու արդյունքում կարելի է ունենալ բարեկեցիկ կյանք, «իսկ եթե կարողանաք ձեր աշխատանքը և հոբբին մեկտեղել՝ ձեր աշխատանքը ձեզ համար կդառնա երջանկության, ստեղծագործելու, հնարավորությունների միջավայր»:

Ինչո՞ւ ընտրել ուսուցչի պատվաբեր մասնագիտությունը. ռեկտորի պաշտոնակատարը հիշեց Չերչիլի խոսքերը՝ ցանկացած երկրի ղեկավար կցանկանա այնպիսի ազդեցություն ունենալ, ինչպիսի ազդեցություն ունի ուսուցիչը, որովհետև ուսուցիչների ձեռքերում են կրթվում, թրծվում, կայանում մեր ներկան ու ապագան, ուսուցիչները մեզ թևեր տվողներն են, մեր մտքի հորիզոնը բացողներն են, ուսուցիչները մեր ապագան մեզ սովորեցնողներն են:

Լիլիթ Մկրտչյանը հույս հայտնեց, որ աշակերտները համալսարանում կստանան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, մեծ բավարարվածությամբ կհեռանան իրենց դպրոցներ՝ ամենատարբեր մասնագիտությունների գաղտնիքներով զարմացնելու իրենց ընկերներին և նորից վերադառնալու ակնկալիքով:

Դպրոցականներին ողջունեցին ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը, ՈՒԽ փոխնախագահ Ֆելիքս Բախչինյանը: Նրանք ներկայացրին համալսարանում ուսանողական խորհրդի կողմից իրականացվող տարաբնույթ ծրագրերը, իսկ ՀՊՄՀ Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման բաժնի մասնագետ Աննա Հախումյանը դպրոցականների համար բացահայտեց բուհի միջազգային կապերը, արտերկրում մեկ կիսամյակ սովորելու հնարավորությունները:

Իր փորձառությունը արտերկրի բուհում մեկ կիսամյակ սովորելու մասին ներկայացրեց Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Մոնիկա Պողոսյանը:

Էթիկայի դպրոցի տնօրեն Գևորգ Մկրտչյանը խոսեց հաղորդակցման էթիկայի մասին:

Բանասիրական ֆակուլտետի մեծ դահլիճում

2

1 յուրաքանչյուր ֆակուլտետի ուսանողներից կազմված խումբը իր սեղան-տաղավարով ներկայացրել էր ֆակուլտետին բնորոշ ցուցադրական նյութեր, սարքավորումներ, պաստառներ որտեղ աշակերտները կարող էին ծանոթանալ ֆակուլտետների առանձնահատկություններին:

4 օր տևած մասնագիտական կողմնորոշման փառատոնին մասնակցեցին հանրապետության 35 դպրոցի շուրջ 455 աշակերտ՝ ուսուցիչների ու տնօրենների ղեկավարությամբ:

Միջոցառումը վարող ուսանողները յուրաքանչյուր օր հանգամանորեն ներկայացրին համալսարանի 10 ֆակուլտետի մասնագիտությունները, մասնագիտացումները և հնարավորությունները:

Կրթատոնը շարունակվեց մի քանի օր՝ դպրոցականներին տալով տեղեկատվություն մասնագիտություն ընտրելու հնարավորությունների մասին, աշակերտներին ողջունեցին և բուհի առանձնահատկությունների մասին խոսեցին ուսումնական գծով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը և Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանը:

Ամենամյա փառատոնն ամփոփվեց ապրիլի 13-ին, փառատոն, որի յուրաքանչյուր օրը հագեցած էր մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հետաքրքիր հանդիպումներով, վարպետության դասերով, ինտերակտիվ ծրագրերով, ազգային պարերի ուսուցմամբ: Փառատոնը դպրոցականներին աննկարագրելի անմոռանալի օրեր պարգևեց: Նրանք մոտիկից ծանոթացան համալսարանի մասնագիտություններին, հետաքրքրությունների շրջանակում ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները, և նրանցից շատերը համալսարանից հեռացան հստակ կողմնորոշված:

Սոցցանցերում դպրոցների պատվիրակությունների հիացական գրառումները վկայում են փառատոնի կայացման մասին:

ՖՐԱՆԿՈՖՈՆՅԱՆ ՏՈՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Ֆրանկոֆոնիայի տոնին նվիրված միջոցառումը ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետում իսկական միջմշակութային տոնի վերածվեց. ֆրանսերեն երգ-երաժշտություն, սիրո լեզու համարվող ֆրանսերենով ուսանողական գեղեցիկ կատարումներ, որ դահլիճը լցրին ջերմությամբ ու սիրով:

Միջոցառումը, որն անցկացվեց Մանկավարժական համալսարանի և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության (AUF) համագործակցությամբ, նպատակ ուներ միջբուհական համագործակցության համատեքստում ներկայացնելու ֆրանկոֆոն երկրների մշակութային բազմազանությունը և նպաստելու Հայաստանում ֆրանսերենի տարածմանը:

Միջոցառման կարևորությունն ընդգծեց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը. «Սա ևս մեկ առիթ է վերարժևորելու այն մեծ ու համերաշխ ընտանիքը, որ կոչվում է Ֆրանկոֆոնիա»:

Լիլիթ Մկրտչյանը շնորհակալություն հայտնեց ֆրանկոֆոն գործընկերներին և վստահեցրեց՝ տարիների համագործակցության արդյունքում նկատելի են մասնագիտական վերելքները, իսկ օրվա մշակութային միջոցառումը վկայում է շնչող, ստեղծագործող համագործակցության մասին: Ապա նա ներկաներին հորդորեց վայելել օրվա տոնը, կախարդանքը և այն ջերմ բարեկամությունը, որը ներկա պահին միավորում է բոլորին:

Միջոցառմանը ժանրային տարբեր կատարումներով հանդես եկան Ֆրանկոֆոնիայի գործակալության անդամ համալսարանների՝ ՀՊՄՀ-ի, ԵՊՀ-ի, ՃՇՀԱՀ-ի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի ուսանողներն ու երգչախմբերը: Ներկաները ջերմ ծափողջույններով ընդունեցին Շառլ Ազնավուրի, Էդիթ Պիաֆի, Զազի սիրված երգերը:

Մանկավարժական համալսարանի ուսանողները ներկայացրին Արամ Խաչատրյանի և Սայաթ-Նովայի ստեղծագործություններից, որոնք խորհրդանշում էին հայ-ֆրանսիական մշակույթների կապերն ու մշակութային երկխոսությունը:

«Ֆրանկոֆոնիան միայն լեզուն չէ, այլ նախևառաջ մշակութային բազմազանությունն ու համագործակցությունը»,- ասաց Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության ազգային գրասենյակի ղեկավար Ռուզաննա Ղալթաղչյանը, իսկ Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության տարածաշրջանային

գրասենյակի տնօրեն Լոռ Կաստենը ընդգծեց միջոցառման խորհուրդը. այն հիշեցնում է ֆրանկոֆոնիայի ամրությունն ու արժեքները՝ հարգանք, համագործակցություն, հավասարություն և կայուն զարգացում, որոնք իմաստավորում են մեր առօրյան:

Հիրավի, ֆրանկոֆոնիան միասնական է դարձնում տարբեր ազգությունների մարդկանց՝ նրանց միավորելով մշակութային երկխոսության շուրջ. այս անգամ այդ միավորումը Մանկավարժականում համալսարանում էր, ուր երգն իսկապես մերձեցրեց հայ-ֆրանսիական կապերը՝ օրվա հրաշալի խորհուրդը վերածելով միջմշակութային տոնի:

Հանդիպում Մանկավարժականում

ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը ապրիլի 8-ին Մանկավարժական համալսարանում վարեց «Եվրոպական միությունը երիտասարդների համար. եկեք խոսենք այն մասին, ինչը միավորում է մեզ» խորագրով հանդիպում-քննարկումը: Երկխոսության հարթակը միտված էր հայ երիտասարդներին ու դասախոսներին եվրոպական ծրագրերն ու նախաձեռնությունները ներկայացնելուն:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց ԵՄ պատվիրակության ղեկավարի այցը համալսարան՝ ընդգծելով, որ եվրոպական կրթական ծրագրերի համատեքստում բուհն ակտիվորեն համագործակցում է կրթական տարբեր կառույցների հետ, ինչը նպաստում է եվրոպական կրթական համակարգի առաջադեմ փորձն ու մշակույթը Հայաստան բերելուն:

Վասիլիս Մարագոսը կարևորեց իր հանդիպումը ապագա մանկավարժների հետ, ընդգծեց, որ ԵՄ-ն կարևորում է յուրաքանչյուր անդամ երկրի ինքնությունը, անհատին, նրա արժեքները, միջանձնային շփումներն ու միջմշակութային կապերը:

Դեսպանը միաժամանակ ներկայացրեց Եվոպական միության գործունեության սկզբունքները, ինչպես նաև խոսեց ԵՄ-Հայաստան համագործակցության մասին՝ վստահեցնելով՝ համագործակցության հիմքում ժողովրդավարական գործընթացներն են և մարդու իրավունքները:

Խոսելով Եվրոպական միության երիտասարդ դեսպանների հավաքագրման նախաձեռնության մասին՝ նա ասաց, որ ուրախ կլինի Մանկավարժականի ուսանողներին տեսնել այդ ցանցում, որը հնարավորությունների լայն հարթակ է, միաժամանակ ընդգծեց մանկավարժների դերը ապագա հասարակության քաղաքացի դաստիարակելու գործում:

Ազգությամբ հույն դեսպանը հղում արեց հունական ասացվածքին՝ ուսանողներին հորդորելով՝ ճանաչեն իրենց, մտածեն ոչ թե սահմանների, այլ հնարավորությունների մասին, խիզախեն երազանքներ ունենալ և գնան իրենց երազանքների հետևից:

Չմտածել սահմանների մասին, մտածել հնարավորությունների մասին. սա իր ուսանողության տարիներին ստացած ամենակարևոր դասն է եղել, իսկ Հայաստանում բացահայտածը՝ հայ ժողովրդի բացառիկ մշակույթը:

Հանդիպման ավարտին Օտար լեզուների ֆակուլտետի ուսանողները հարցեր ուղղեցին Վասիլիս Մարագոսին:

«Ինձ համար Եվրամիությունում աշխատելն ավելին է, քան աշխատանքը»,-ասաց Մարագոսը, իսկ Եվրամիության ընդհանուր սկզբունքներին անդրադառնալիս ընդգծեց ընդհանուր շուկայի առկայության, մարդկանց, կապիտալի ու գաղափարների ազատ տեղաշարժերի կարևորությունը:

Ուսանողներին էլ խորհուրդ տվեց օգտվել «Էրազմուս+» և այլ ծրագրերից՝ որպես աշխարհի զարգացումներին ընդառաջ գնալու և իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները նորովի բացահայտելու հնարավորություն:

Սիլվա Ասրյան

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆԸ

Կյանքից հեռացել է հայտնի լեզվաբան, հայերենագետ բանասիրական գիտությունների դոկտոր (1991), պրոֆեսոր (1990), ՀՀ վաստակավոր մանկավարժ, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի առաջին խմբագիր Պետրոս Սարգսի Բեդիրյանը:

Ծնվել է 1931-ին Հալեպում (Սիրիա)՝ 1915-ին Կեսարիայից տեղահանվածների ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի նախակրթարանում, ապա 3 ամիս սովորել է ֆրանսիական լիցեյում, հետո՝ Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում (1943-1946): 1946-ին աշխատել է Հալեպում: 1947-ին ընտանիքի հետ հայրենադարձվել է:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում (համալսարանում) է ամբողջացրել ուսումնառությունը (1947-1955), որին հաջորդել է նույն համալսարանում դասախոսական 40-ամյա աշխատանքը (1955-1995): Այդ ընթացքում (1970-1972 և 1987-1989թթ.) գործուղումով դասավանդել է Մելքոնյան հաստատությունում: 1995-2008թթ. դասախոսել է Գևորգյան հոգևոր ճեմարանում (աստվածաբանական համալսարանում):

Պրոֆ. Պ. Բեդիրյանի սաներն այսօր կրթության գործի պատասխանատուներ են Հայաստանում և Սփյուռքում: Նա բազում հոգևորականներ է պատրաստել Հայ առաքելական եկեղեցու համար:

Արժանացել է ԽՍՀՄ «Աշխատանքային արիության համար հոբելյանական մեդալին (1970), Պատվո նշան շքանշանին (1986), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին (2004), ՀԽՍՀ լուսավորության նախարարության Խաչատուր Աբովյան մեդալին (1981), ՀՀ վաստակավոր մանկավարժ կոչումին (2006), ՀՀ կրթության և ՀՀ սփյուռքի նախարարությունների Ոսկե մեդալներին (2011), Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ոսկե մեդալին (2015):

Գիտական հետաքրքրության շրջանակները՝ գրական արևելահայերեն, գրական արևմտահայերեն, գրաբար, բառագիտություն և դարձվածաբանություն, ստուգաբանություններ, ընդհանուր լեզվաբանություն, բառարանագրություն, լեզվի ուսուցման մեթոդիկա, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ:

Նրա գրչին են պատկանում 33 գրքեր (որոնց թվում՝ դարձվածքների կոթողական բառարանը (76 մամուլ) երկլեզվյան-ռուս-հայերեն և հայ-ռուս.՝ հեղինակակիցներով, հայերեն-անգլերեն, անգլ.-հայ.՝ առանձին, եռալեզվյան-հայ.-ռուս.-անգլ. երկրաբանական՝ հեղինակակիցներով, պատկերներով բացատրական բառարան՝ առանձին), ավելի քան 200 գիտական հոդվածներ (որոնց թվում 2 ֆրանս.՝ Միլանի ակադեմիական տարեգրքերում և 2 անգլ.՝ համացանցի academia.edu ծրագրով):

Ապրիլի 7-ին պրոֆեսոր Բեդիրյանը կդառնար 95 տարեկան:

Պետրոս Բեդիրյանի հիշատակը միշտ վառ կմնա հարյուրավոր ուսանողների սրտերում:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետ Ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԷՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԿԱԿԻ ԼԱՇՎԻԼԻՆ

Ապրիլի 13-ին Մանկավարժական համալսարանում էր Շախմատի միջազգային ֆեդերացիայի կառավարման խորհրդի հատուկ հանձնարարությունների տնօրեն, Վրաստանի Շախմատի ֆեդերացիայի նախագահ Ակակի Լաշվիլին: ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Սմբատ Լպուտյանի և գիտական հարցերի գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի ուղեկցությամբ Ակակի Լաշվիլիին ընդունեց համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը:

Խոսակցություն ծավալվեց ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի առաքելության ու գործունեության, ոլորտում երկուստեք համագործակցության եզրեր գտնելու հնարավորության մասին:

Վրաստանի Շախմատի ֆեդերացիայի նախագահ Ակակի Լաշվիլին գոհունակությամբ խոսեց Հայաստանում շախմատի ավանդույթների, դպրոցներում որպես առարկա դասավանդելու փորձառության մասին և հույս հայտնեց, որ առաջիկայում երկու երկրների միջև շախմատային համագործակցության հարթակ կստեղծվի, որպեսզի համալսարանի լավագույն փորձն ու ավանդույթները կիրառեն նաև հարևան երկրում:

Լիլիթ Մկրտչյանը համառոտ ներկայացրեց համալսարանում «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտում իրականացվող աշխատանքները, ընդգծեց բուհում ներդրված «Շախմատ» մասնագիտության, «Շախմատը դպրոցներում» ծրագրի, առարկայի կրթական արժեքի կարևորությունը:

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Սմբատ Լպուտյանը և պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ներկայացրին՝ տարիներ շարունակ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտում թիմային աշխատանք է տարվում ոչ միայն «Շախմատ» առարկայի ուսուցման ուղղությամբ, այլև հետազոտություններ են իրականացվում՝ ուսումնասիրելու շախմատի ազդեցությունը դպրոցականի մտածողության, դաստիարակության, տրամաբանության ձևավորման վրա:

Ակակի Լաշվիլին վստահեցրեց՝ շախմատը երեխաներին մտածելու լայն հնարավորություններ է տալիս՝ շնորհակալություն հայտնելով համալսարանի գիտահետազոտական ինստիտուտի երկարամյա և արդյունավետ աշխատանքի համար, նաև խոստացով հանդիպել Մանկավարժական համալսարանի դպրոցների սովորողների հետ:

Ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց մեր ժամանակների լավագույն շախմատիստ, գրոսմայստեր Ակակի Լաշվիլիի հետ դպրոցականների հանդիպումը: Նա ընդգծեց նաև, որ բուհը սիրով կհամագործակցի Վրաստանի գործընկերների հետ՝ ներկայացնելու ոլորտում իր ձեռքբերումներն ու փորձառությունը:

Ակակի Լաշվիլին ՀՊՄՀ թանգարանում ծանոթացավ Մանկավարժական համալսարանի պատմությանը, ապա ռեկտորի պաշտոնակատարի, պրոռեկտորի և ամբիոնի վարիչի ուղեկցությամբ հանդիպեց «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքային թիմի հետ:

Շախմատային կրթության ծրագրերի համակարգող Վահան Սարգսյանը ներկայացրեց 2011 թվականից գործող գիտահետազոտական ինստիտուտի կրթական ծրագրերն ու ուղղությունները, դպրոցներում շախմատի ուսուցման ուսումնասիրման արդյունքները:

Սմբատ Լպուտյանը խոսեց առկա մարտահրավերների մասին, ապա համատեղ քննարկեցին շախմատային կրթության ոլորտում հանդիպող խնդիրների լուծման ուղիները:

Սիլվա Ասրյան

Գիտագործնական համաժողով



Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը և Արմավիրի պետական մանկավարժական համալսարանը ապրիլի 10-ին առցանց ձևաչափով կազմակերպել էին «Անձի զարգացումը կրթական համակարգերում» խորագրով միջազգային գիտաժողով:

Գիտաժողովի նպատակն էր գիտական և մասնագիտական հանրությանը միավորել ժամանակակից կրթական համակարգերում անհատի զարգացման տեսական ու կիրառական ասպեկտների համալիր քննարկման շուրջ:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց գիտական հարցերի գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը. նա կարևորեց գիտաժողովի թեման՝ կրթության ոլորտում անընդհատ փոփոխվող ժամանակակից աշխարհի մարտահրավերների պայմաններում:

Պրոռեկտորը խոսեց կրթական համակարգում անհրաժեշտ փոփոխությունների ու նոր մեթոդների, ժամանակակից բարձրագույն մանկավարժական կրթության մեջ ապագա ուսուցչի մասնագիտական որակների ձևավորման ու կատարելագործման, միջազգային համագործակցությամբ փորձի փոխանակման մասին՝ ընդգծելով դրանք որպես ապագայի կարևոր երաշխիքներ:

Աշխատաժողովին մասնակցում էին, ուսանողներ, մագիստրատներ, ասպիրանտներ, դասավանդողներ, ուսուցիչներ, լրացուցիչ կրթության մանկավարժներ, մեթոդիստներ, գիտնական-հետազոտողներ, կրթական ոլորտի շահագրգիռ մասնագետներ:

Կրթության մեջ անհատի զարգացման գիտամեթոդոլոգիական հիմունքները, կրթական միջավայրում անհատի զարգացման տարիքային դինամիկան, սովորողների ինքնավարության սուբյեկտայնության զարգացումը, մանկավարժի մասնագիտական զարգացումը որպես սովորողների անձնային աճի գործոն. այս և շատ այլ գիտական ուղղությունների ներքո զեկուցումներով հանդես եկան աշխատաժողովի մասնակիցները:

Միջազգային համաժողովին մասնակցում էին նաև Մանկավարժական համալսարանի դասախոսներ և ուսանողներ. նրանք ներկայացրին ուսանողի ժամանակակից խնդիրներն ու ավագ նախադպրոցականների խոսքի զարգացման ժամանակակից մեթոդները ներկայացնող զեկուցումներ:

Սիլվա Ասրյան

ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՌՈՂՋ ՍԵՐՆԴԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

«Առողջ և գրագետ սերունդ դաստիարակելու գործում ուսուցիչը ոչ միայն գիտելիքներ փոխանցող է, այլև աշակերտների հոգեբանական, ֆիզիկական և սոցիալական բարեկեցության պահապանը: Նա առողջապահական մշակույթի և առողջապահական գիտակցություն ձևավորողն է: Հետևաբար բժիշկը և մանկավարժը միասին են, նրանց համագործակցությամբ է տեղի ունենում առողջ, հոգեպես կայուն, սոցիալապես պատրաստված և մտածող սերնդի ձևավորումը»,- միջոցառման խորհուրդը բացեց ՀՊՄՀ Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Նարինե Սահակյանը Մանկավարժական համալսարանում Առողջության միջազգային օրվան նվիրված սեմինարին:

Սեմինար-քննարկմանը մասնակցում էին բուհի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության, Բանասիրական, Գեղարվեստական կրթության և Օտար լեզուների ֆակուլտետների դասախոսները և ուսանողները:

Առողջապահական տարրերի ներդրումը բոլոր ոլորտներում, առաջին հերթին և բուհում, պետք է դառնա ռազմավարական ուղղություն, որովհետև յուրաքանչյուր հիվանդության կանխարգելումը կրթվածության արդյունք է՝ վստահեցրեց ամբիոնի վարիչ Նարինե Սահակյանը: Իսկապես, բժշկագիտությունն ու մանկավարժությունը սերտորեն կապված են միմյանց հետ, սեմինարի քննարկումները ևս մեկ անգամ ապացուցեցին բժշկագիտության առանցքային դերը մանկավարժական կոմպետենցիաների զարգացման մեջ:

Առողջությունը դեռ ամեն ինչ չէ, բայց ամեն ինչ ոչինչ է, եթե չկա առողջություն. գերմանացի փիլիսոփա Շոպենհաուերը երիցս իրավացի է:

Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի դոցենտ, բժշկական գիտությունների թեկնածու Աննա Մարգարյանն էր միջոցառման հեղինակը, օրվա թեման՝ տուբերկուլյոզը:

Օրվա ուղերձները ավելի քան խոսուն էին՝ «Կյանքը բնության գեղեցկագույն գյուտն է, իսկ մահը՝ նրա ծուղակը», «Առողջ մարդը բնության ամենաթանկարժեք ստեղծագործությունն է»:

Սեմինար քննարկումն անցավ մարդկային կյանքի ամենանշանակալի արժեքներից մեկի՝ առողջության պահպանման և հիվանդությունների կանխարգելման հարցի շուրջ մասնագիտական ամենատարբեր դիտարկումներով:

Այս տարվա կարգախոսն է՝ «Միասին դեպի առողջություն, միասին գիտության հետ», որի ներքո կազմակերպված քննարկումն առանձնահատուկ էր իր միջառարկայական բնույթով՝ բուհի տարբեր ֆակուլտետների ու մասնագիտությունների ուսանողների մասնակցությամբ:

Որպես առողջապահական ժամանակակից մարտահրավեր՝ ընտրվել էր տուբերկուլյոզ հիվանդությունը:

Ուսանողները ներկայացրին հիվանդության կործանարար հետևանքների վերաբերյալ իրենց տեսանկյունները, անցկացրին խաղ-հարցում քննարկվող թեմայի շուրջ, խոսեցին հիվանդության պատճառների, հետևանքների ու ռիսկերի մասին:

Միլվա Ասրյան

ԱՊՐԻԼԻ 2-Ը ԱՈՒՏԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՆ Է

Հատուկ և ներառական կրթության Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոն դասախոս Հայկ Մկրտչյանը կազմակերպել էր «Մասնագետ-ծնող համագործակցություն իրական փորձի միջոցով. էթիկա, ընդունում, մարտահրավեր» խորագրով հանդիպում-բաց դաս: Օրվա խորհուրդը կապված էր ՄԱԿ-ի կողմից հռչակված Աուտիզմի իրազեկման համաշխարհային օրվա հետ, որը նշվում է 2008 թվականից:

«Օրվա խորհուրդը միտված է մեծահասակների կյանքի որակի բարելավման անհրաժեշտությանը, և մեր բոլոր մանկավարժահոգեբանական ծառայությունների աշխատանքը պիտի ուղղված լինի այս երեխաների և մեծահասակների կյանքի որակի բարելավմանը,-ասաց Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Գոհար Հովյանը: -Վերջին երկու տասնամյակում Հայաստանում կրթական բարեփոխումների արդյունքում և համընդհանուր ներառականության գաղափարի տարածման շրջանակում թեև մանկավարժահոգեբանական ծառայությունների մի մեծ բանակի օգնությամբ այս երեխաներին տրվում է անհրաժեշտ օգնություն, այնուամենայնիվ, հիմնական ծանր աշխատանքն ու բեռը մնում է ծնողների ուսերին: Մենք պետք է կարողանանք հասկանալ՝ այս խնդիր ունեցողները ոչ թե տարօրինակ են, այլ պարզապես տարբերվում են մյուսներից իրենց բացառիկ ընդունակություններով ևս»:

Դեկանն իր խորին հարգանքն ու գնահատանքն ուղղեց դահլիճում ներկա ծնողներին, որոնք երեկոյան, բոլոր միջոցառումներից հետո, առերեսվում են երեխաների խնդրին՝ մենակ մնալով նրանց խնամքի պայմաններում:

Հանդիպումը կազմակերպվել էր Արտ թերապիայի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ՝ «Էթիկայի և իրավահարաբերություններ» առարկայի շրջանակներում, որին հրավիրել էին նաև ծնողների:

Ելույթ ունեցավ օրվա «մեղավորը»՝ ՀՊՄՀ դասախոս Հայկ Մկրտչյանը, որը երկար տարիներ սոցիալական մանկավարժության, սոցիալական ապահովության տարբեր հաստատություններ ու ծրագրեր է ներկայացնում: Նա կարևորեց օրվա թեման, ընդգծեց, որ խոսելու են աուտիզմի և ծնող-մասնագետ փոխհարաբերությունների մասին, որոնք «երբեմն բարդ են ու բազմաշերտ, երբեմն էլ գործընկերային համախոհության ու համագործակցային հարաբերությունների միջավայրը ուղիղ կապ ունի արդյունավետության, որակի, ծառայությունների ընդհանուր արժեքի ու որակի հետ»:

Նա շնորհակալություն հայտնեց ծնողներին՝ համալսարանական բաց դասին մասնակցելու ցանկության համար և հորդորեց ազատ ու անվտանգ միջավայրում խոսել մասնագետների հետ փոխհարաբերությունների մասին, որպեսզի ձևավորվի միասնական մոտեցում, որը հնարավորություն կընձեռի աջակցող ծառայությունները դարձնել ավելի որակյալ ու մարդակենտրոն:

Հայկ Մկրտչյանը շեշտեց՝ աուտիզմի իրազեկման համաշխարհային օրվա խորհուրդը վաղուց դուրս է եկել զուտ իրազեկման սահմաններից և ավելի շատ ուղղված է ներառման աշխատանքների իրականացմանը, աջակցող միջավայրի ստեղծմանը, իրավունքների պաշտպանությանը: Այդ համատեքստում նա պանելային քննարկմանը հրավիրեց աուտիզմ ունեցող երեխաների ծնողների՝ ֆեյսբուքյան հարթակների հիմնադիր Մելեա Միլիտոսյանին և ՄՄ կենտրոնի հիմնադիր, ծնողական համայնքների հետ աշխատանքների համակարգող Լենա Հարությունյանին, որոնք մասնագիտական համայնքի հետ աշխատանքում ունեն 15 տարվա փորձառություն:

Ներկաները դիտեցին ֆիլմ՝ ծնողի կողմից երեխայի առանձնահատկության ընդունման գործընթացի մասին, ապա ծավալվեց քննարկում մասնագետի դերի մասին վաղ միջամտության ծառայությունների և այդ փուլում էթիկական մարտահրավերների մասին:

Աուտիզմ. սահմանափակումներից դեպի կարողություններ

Ապրիլը աուտիզմի իրազեկման ամիս է, որի շրջանակներում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը հանդես եկավ հերթական նախաձեռնությամբ՝ «Տեսնել կարողությունները, ոչ սահմանափակումները» կարգախոսով:

«Այսօրվա նպատակը ոչ միայն իրազեկելն է, այլև տեսնել, զգալ, հասկանալ, թե անկախ առանձնահատկություններից, ինչպես կարող է յուրաքանչյուր անհատ ստեղծագործել, ինքնադրսևորվել,-ասաց Հատուկ և ներառական կրթության ֆակուտետի դեկանի տեղակալ Սուսաննա Մուրադյանը:-Մեր ֆակուլտետի հիմնական առաքելությունն է բացահայտել յուրաքանչյուր անձի կարողությունները և հնարավորությունները, որոնք զարգացնում և հնարավորություն են տալիս ներառող և հասանելի միջավայրի շնորհիվ դրսևորելու երեխաների անհատական առանձնահատկությունները, ինքնադրսևորվելու հնարավորություն են տալիս»:

Համալսարանի թանգարանում ներկաները հնարավորություն ունեցան լսելու Հայհունական պետական քոլեջի 3-րդ կուրսի ուսանող, աուտիզմ ունեցող Վահագն Սեմերջյանին: Որպես ապագա զբոսաշրջության մասնագետ՝ նա ներկայացրեց ՀՊՄՀ պատմության թանգարանը՝ որպես մերօրյա կրթամշակութային զարգացման կենտրոն՝ ուսումնասիրելով կրթության ձևավորման ուղին քաղաքակրթություններից մինչև հայկական ազգային դպրոցների ստեղծում:

Իրազեկման միջոցառումը շարունակվեց համալսարանի դահլիճում:

«Իրավունքից դեպի հնարավորություն» խորագրով ելույթ ունեցավ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Կիմա Սարգսյանը. նա ներկայացրեց հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ուղղությունները:

Հատուկ հոգեբանության մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի, աուտիզմի համախտանիշով Հայկ Բարսեղյանի մայրը՝ Լուսինե Մարգարյանը ներկայացրեց տղայի ստեղծագործական աշխատանքները՝ վստահեցնելով, որ նման երեխաների կարողությունները պարզապես պետք է բացահայտել:

Լուսինե Մարգարյանը սովորում է Հատուկ հոգեբանության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Արդեն 8 տարի Լուսինեն իր երեխայի՝ Հայկի հետ պայքարում է աուտիզմի դեմ, աշխատում ամենափոքր հմտությունների վրա՝ հասկանալու, թե այդ հմտությունը հետագայում որքանով կօգնի իր երեխային՝ կյանքն ավելի դյուրին դարձնելու:

«Այսօր ավելի շատ ուզում եմ խոսել ոչ թե այն դժվարությունների մասին, որով անցնում է յուրաքանչյուր ծնող իր երեխայի հետ, այլ ուզում եմ խոսել հույսի և ապագայի տեսլականի մասին, որովհետև շատ ծնողներ ունեն վախեր, որոնց բախվում են, բայց դրանք կարելի է դարձնել առաջ մղող շարժիչ ուժ՝ այդ վախը հաղթահարելու համար»,-ասում է Լուսինեն և ընդգծում, որ հատուկ հոգեբանությունն ընտրել է նախ իր համար, իրեն վերագտնելու և երեխային օգնելու համար: Այստեղ նրան շատ են օգնել, տվել են գործիքակազմ, օգնել հաղթահարելու դժվարությունները, հավատալու իրեն և երեխայի ուժերին:

Լուսինեն ներկայացրեց աուտիզմով երեխաների ստեղծագործությունները՝ ընդգծելով աշխարհը այդ տեսանկյունից դիտարկելու նրանց առանձնահատկությունները:

Ուսանողները ներկայացրին ինտերակտիվ ուսուցողական խաղ՝ աուտիզմի միֆերի և իրականության մասին, որին մասնակցեցին դահլիճում ներկա գտնվողները, դիտեցին ֆիլմ ընկալման առանձնահատկությունների մասին:

Միլվա Ասրյան

ԲՈՒՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«Էկոլոգիան ապագայի մասնագիտություն է».

Լյուդմիլա Ավանեսյան



Լյուդմիլա Ավանեսյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լյուդմիլա Գրիգորի Ավանեսյանը էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի հիմնադրման ակունքների մոտ կանգնած անհատներից է, որն իր աշխատանքային մկրտությունն ստացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության և քիմիայի ֆակուլտետում:

Լյուդմիլան ավարտել է ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետը, բայց հանգամանքների բերումով նրա աշխատանքային ուղին սերտորեն կապվել է մանկավարժական կադրեր պատրաստող մայր բուհի գործունեության հետ:

Կենսաբանության և քիմիայի ֆակուլտետում նրա մուտքը Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում էր, ուր սկսեց ավագ լաբորանտից:

Մանկավարժականում աշխատել է 1976 թվականից, երբ ամբիոնի վարիչը Սահակ Կարապետյանն էր, պատկառելի մի մարդ, ում հետ պատիվ էր շփվելն ու աշխատելը: Լյուդմիլա Ավանեսյանը հիշում է երախտավորներին՝ Մեսրոպ Խամբաբյանին, որը հոյակապ ֆիզիոլոգ էր, շատ ճանաչված գիտնական նաև մեր հանրապետությունից դուրս: Ամբիոնում շատ էին լավ մասնագետները, որոնք, ցավոք, այսօր չկան:

Մտովի հետ գնալով՝ հիշում է երբ Ֆիզիոլոգիայի ամբիոնը փակեցին, երբ այն շատ անհրաժեշտ էր:

Տիկին Ավանեսյանը սիրով ու հպարտությամբ է հիշում Մանկավարժականում այն ժամանակների իր պրոֆեսոր, դասախոս գործընկերների մասին. հրաշալի կադրեր կային, որոնց միջավայրում է կերտվել իր աշխատանքային մասնագիտական ուղին:

Այն տարիներին, երբ ձևակերպվել է որպես հայցորդ. նա պետք է պարտադիր 240 ժամ աշխատեր: Այնուհետև առանձնանում է էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնը, որտեղ էլ շարունակում է իր գործունեությունը:

Հարկ է նշել, որ նրա թեկնածուական ատենախոսության թեման նվիրված էր էկոլոգիական դաստիարակությանը՝ «Էկոլոգիական դաստիարակության ուղիներն ու միջոցները»: Դա իսկական խիզախում էր այն ժամանակներում, երբ հանրապետությունում նոր-նոր քննարկվում էին էկոլոգիական խնդիրները, դառնում գիտական քննարկումների նյութ, և Լյուդմիլա Ավանեսյանը երկրորդն էր, ում պաշտպանության թեման վերաբերում էր էկոլոգիական խնդիրներին: Այնուհետև էկոլոգիայի ամբիոնում վարում է դասընթացներ՝ ընդհանուր էկոլոգիա, էկոլոգիայի, բնապահպանության հիմունքներ, մարդու էկոլոգիա, որոշ ժամանակահատվածում էլ ղեկավարում Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնը:

Մեր օրերում էկոլոգիական հիմնախնդիրները աշխարհի առաջին մարտահրավերներից են, գլոբալ բնույթ են կրում և գիտնականներին մղում հետազոտական նոր վերլուծությունների, պատճառահետևանքային նոր կապերի բացահայտման:

Տիկին Ավանեսյանը ներկայացնում է՝ հիմա հետաքրքիր աշխատանքներ ենք իրականացնում էկոլոգիական մոնիտորինգի և գնահատման գիտական լաբորատորիայում, հոդվածներ հրապարակում արտասահմանյան պարբերականներում: Հանրապետության տարբեր վայրերում, որտեղ ավելի աղտոտված բաց հանքեր կան, նմուշառումներ են անում՝ որոշելու ծանր մետաղների քանակը՝ հողի, ջի, բանջարեղենի մեջ: Այդ համատեքստում մեծ աշխատանքներ են իրականացրել Լոռիում, մասնավորապես Ալավերդիում, որտեղ բաց հանքեր ու պոչամբարներ կան, հասել են մինչև Ախթալա: Տիկին Ավանեսյանն այնտեղ վիճակն աղետալի է որակում՝ ելնելով կատարած հետազոտական վիճակագրությունից՝ երեխաների առողջության ու մտավոր կարողությունների վրա նրանց ազդեցությունների ռիսկայնությունից: Զրուցակիցս փաստում է՝ զարմանալիորեն կան դպրոցներ, որոնք անմիջականորեն մոտ են գտնվում հանքերին, ինչպես Արարատի մարզում:

Ստացված արդյունքներն ուղարկում են Գիտության կոմիտեին՝ խնդիրներին պետականորեն լուծման ուղիներ գտնելու ակնկալիքով:

«Դու պետք է լավ մանկավարժ լինես, օգտագործես նոր տեխնոլոգիաները, ինտերակտիվ ուսուցում կազմակերպես, թե չէ ժամանակից հետ կմնաս»,-ասում է երկարամյա դասախոսը, որ բուհի ակունքներից է գալիս՝ հնի ու նորի խաչմերուկում փորձելով նորովի մտածել, նորովի դասավանդել:

Տիկին Լյուդմիլայի արմատները Արցախից են՝ Հադրութի շրջանից, այնտեղ ապրող տատիկին ու պապիկին հաճախ է հյուր գնացել: Վերջին տարիներին դասախոսներով հաճախ էին այցելում Ստեփանակերտի համալսարան, համագործակցային ծրագրեր իրականացնում:

Նոր սերնդի մասին խոսելիս՝ Լյուդմիլա Ավանեսյանը գնահատանքով է արտահայտվում նրանց ժամանակակից մտածողության մասին, ասում է՝ տաղանդավոր ուսանողներ ունենք: Գիտական լաբորատորիայում աշխատում են ուսանողների հետ, մանկավարժությունը համադրում գիտական պրպտումներին:

Հետաքրքրվում եմ՝ ինչ գրավչություն ունեն ֆակուլտետի մասնագիտությունները, որ ԲՏՃՄ ոլորտն են ներկայացնում, և որտեղ սովորող ուսանողները մյուսների համեմատությամբ ավելի բարձր կրթաթոշակ են ստանում. զրուցակիցս վստահեցնում է՝ էկոլոգիան ապագայի մասնագիտություն է ամբողջ աշխարհի մակարդակով, էկոլոգիան սահմաններ չի ճանաչում, իսկ առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները աշխարհը կանգնեցրել են գլոբալ աղետների հրատապ կանխատեսումների առաջ:

Որևէ երկրի աղտոտվածությունը կարող է փոխանցվել մի այլ երկրի, ահա ինչու էկոլոգները շատ միասնական են, միասին պայքարում են գլոբալ մարտահրավերների դեմ՝ հաշվի չառնելով կրոնական, ազգային և այլ հակասությունները:

Տիկին Ավանեսյանը թեև սկզբում ընտրել էր մանրէաբանությունը՝ հինգ տարի աշխատելով Ալիխանյանների մոլեկուլյար գենետիկայի ինստիտուտում, որն իրեն շատ բան տվեց, բայց հետո թեքվեց դեպի էկոլոգիական կրթությունը:

Արդեն 50 տարի տարբեր թելերով կապված է մանկավարժական բուհին, աշխատելով տարբեր սերունդների գիտնականների հրաշալի մջավայրում, այնպիսի մասնագետների հետ է աշխատել, որոնցից նոր գաղափարներ է որդեգրել, ուսուցանման նոր մեթոդներ: Աշխատել է շուրջ 10 ռեկտորի հետ:

Աշխատանքային գործունեության ընթացքում ամբիոնը մշտապես համագործակցել է Երևանի պետական համալսարանի գործընկերների հետ, նրանց հետ համատեղ իրականացրել կրթական տարբեր ծրագրեր:

Սիրով ու հպարտությամբ է խոսում Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի նախկին վարիչ, վաղամեռիկ Կարինե Դանիելյանի մասին, որի հետ էկոլոգիական համալիր միջոցառումներ են իրականացրել, նաև մասնակցել հանրապետությունում և նրանից դուրս:

Ու քանի որ ապրիլյան տոնի շրջանն է, հարցնում եմ՝ Էկոլոգիական աղետների դարում որքանո՞վ է փնասված կանանց ու աղջիկների առողջությունը: Պատասխանը մեկն է՝ Էկոլոգիական աղետները փնասում են բոլորին՝ անկախ սեռից, միաժամանակ ցավով նկատում է՝ բոլոր տեսակի էկոլոգիական աղտոտվածությունները մեր հանրապետությունում գոյություն ունեն՝ անապատացում, հանքեր, թափոններ, պոչամբար... Մտահոգվում է՝ միասնական պետական մակարդակով պետք է պայքարել:

Ապրիլի 7-ը մշտապես սիրում են նշել ընտանեկան ջերմ միջավայրում: Գործընկերուհիներին և ուսանողուհիներին մաղթում է՝ առողջ լինել և ապրել խաղաղ ընտանիքում: Ինքն իրեն երջանիկ ու հաջողակ կին է համարում, ապրել է գեղեցիկ կյանք՝ ունի կայացած ընտանիք, սիրում է իր մասնագիտությունն ու աշխատանքային միջավայրը. սա է երջանկության իր գաղտնիքը: Եվ Աստծո ամեն օր սիրով է ներս մտնում հարազատ բուհ, ուր շարունակվում է համեստ ու զուսպ այս կնոջ՝ Լյուդմիլա Ավանեսյանի կյանքի պատմությունը:

Զրույցը՝ Սիլվա Ասրյանի

ԻՆՉՊԵՍ ՆԵՐԱՌԵԼ «ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՐԿՂԻԿ»-Ը ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Մասնկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոսներին և ուսանողներին ներկայացվեց «ԿԶՆԱԿ» հիմնադրամի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցությամբ ստեղծված «Կլիմայական արկղիկ» կրթական և խաղային հավաքածուն:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում ստեղծված վերջնարդյունքի ներկայացումը Մանկավարժականում՝ հորդորելով ապագա մանկավարժներին՝ հասկանալ ինչպես կարող են նոր ստեղծված նյութերը որպես նոր գործիքակազմ օգտագործել վաղը, երբ դասարան մտնեն՝ դասաժամերը դարձնելով ավելի հետաքրքիր:

«ԿԶՆԱԿ» հիմնադրամի ուսուցիչների զարգացման բաժնի մասնագետ Սիրինե Կոսյանը և Արմինե Արշակյանը հանգամանորեն խոսեցին Կլիմայական արկղիկի ստեղծման նպատակի ու կիրառման մասին: Բանախոսները փաստեցին, որ այն 2-12-րդ դասարանների համար է նախատեսված, բայց կիրառելի է նաև ուսանողների համար: Սա երկրորդ ուսումնաօժանդակ նյութերի հավաքածուն է՝ 4 հատորից, և հնարավորություն է տալիս միաժամանակ կիրառել դպրոցում առարկայական տարբեր դասերի ընթացքում:

Կլիմայական փոփոխությունների հիմնախնդիրներին նվիրված նոր ծրագիրը եզակի է և միտված է ներառելու դպրոցական ուսումնական ծրագրերում:

Առաջին հատորում ներկայացված են կլիմայական փոփոխությունների հիմնախնդիրները, երկրորդում փոփոխությունների ազդեցություններն են ներկայացված մարդկանց, գյուղատնտեսության և ամենատարբեր ոլորտների վրա, երրորդ հատորը ներկայացնում է՝ ինչպես կանխարգելել կլիմայի փոփոխությունները, մեղմել, նվազեցնել ջերմոցային գազերը կամ հարմարվել փոփոխություններին: Չորրորդ հատորը մեթոդական է՝ այն ներկայացնում է ինչպես կիրառել Կիմայական արկղը յուրաքանչյուր առարկայի ուսումնական դասընթացի ընթացքում:

Արկղում կան կլիմայական փոփոխությունները ներկայացնող քարտեզ, պաստառներ՝ ածխածնային հետքը կրճատելու և փոփոխություններին հարմարվելու մասին, տաս րոպե տևողությամբ երկու մուլտֆիլմ՝ ինչպես դիմակայել և հարմարվել կլիմայական փոփոխություններին գյուղական և քաղաքային համայնքներում, արկղին կից նաև ստեղծվել են 100 հարց, ինչպես նաև պատասխաններ պարունակող վիկտորինայի խաղեր:

Սիլվա Ասրյան

«ՓՈՐՁՈՒՄ ԵՆՔ ՔԱՅԼԵԼ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՄԲ՝ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ».

Մարիամ Եղյան

Մեր հարցազրույցը պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ Արհեստակցական կազմակերպության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Մարիամ Եղյանի հետ

-Տիկի՛ն Եղյան, շուրջ վեց ամիս է, ինչ ղեկավարում եք բուհի արհեստակցական կազմակերպությունը. քանի՞ անդամ ունեք Ձեր շարքերում և հե՞շտ է ղեկավարել նման կառույցը:

-Արհմիութենական կազմակերպությունը ղեկավարելը ենթադրում է լինել հենարան յուրաքանչյուր անդամի համար, ինչը ինձ համար մեծ պատիվ է: Այսօր բուհի արհեստակցական կազմակերպությանը անդամագրված է 781 աշխատող, ի դեպ, մեծամասնությունը կանայք են: Նրանք ուժեղ և միաժամանակ շատ զգայուն են: Նրանց մեջ կա վճռականության և հոգատարության յուրահատուկ համադրություն, ինչը արհմիությանը դարձնում է ավելի ճկուն ու գործունյա:

Ինչպես յուրաքանչյուր աշխատանքում, այնպես էլ մեր գործունեության ընթացքում անխուսափելի են դժվարությունները: Աշխատանքը, ըստ իս, ոչ այնքան դժվար է, որքան առավել պատասխանատու: Սակայն, զգալով մարդկանց վստահությունը, այն ավելի պարտավորեցնող է դառնում: Ինձ համար արհմիությունը մարդկանց մասին է, նրանց կողքին լինելու, աջակցելու, լսելու և իրենց դժվարությունների հետ նրանց միայնակ չթողնելու. իմ փիլիսոփայությունն է՝ «Լինել մարդկանց կողքին, երբ դա իսկապես կարևոր է»: Կարևոր է նաև զգալ, որ մեր աշխատանքն իրականում օգնում է մարդկանց, և յուրաքանչյուր թեկուզ փոքրիկ որոշում նպաստում է նրանց կյանքի դրական փոփոխությանը:

-Որո՞նք են Ձեր աշխատանքի հիմնական գործառույթները, փորձեք համառոտ ներկայացնել:

-Աշխատանքի հիմնական գործառույթները Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային շահերը ներկայացնելն է, այդ թվում՝ մասնագիտական, սոցիալական, տնտեսական, և իրավունքների պաշտպանությունը:

-Ի՞նչ մարտահրավերներ եք նկատել արհմիության աշխատանքը կազմակերպելիս:

-Արհմիության աշխատանքը կազմակերպելիս հանդիպում ենք բազմաթիվ մարտահրավերների: Նշեմ դրանցից մի քանիսը՝ ինչպես օրինակ, անդամների ներգրավվածության, սահմանափակ ֆինանսական ռեսուրսների, մասնագիտական միասնության բացակայության, հանրային ընկալման հարցերը, որոնք կազմակերպության աշխատանքները կազմակերպելու ընթացքում իսկապես դժվարություններ կարող են առաջացնել:

Շատ աշխատողներ ցանկանում են դադարեցնել ակտիվ մասնակցությունը, չհավատալով, որ արհմիությունը կարող է իրական փոփոխություններ բերել, արհմիության ֆինանսական հնարավորությունները գոյանում են անդամավճարներից, ինչը սահմանափակում է նրա գործունեությունը, ծրագրերի իրականացման հնարավորությունները, աշխատակիցների հետաքրքրությունները տարբեր են՝ կախված բաժնից, մասնագիտությունից կամ աշխատանքային պայմաններից, ինչը դժվարացնում է համատեղ հարցերի առաջ մղումը, որոշ աշխատակիցներ կարող են թերահավատորեն վերաբերվել արհմիությանը, ինչը կարող է ազդել կազմակերպության հեղինակության վրա: Խնդիրներ իսկապես կան, կարծում եմ՝ միասին պետք է լուծումներ գտնել...

-Մեր օրերում արդյո՞ք արհեստական կազմակերպության հիմնական անելիքը համալսարանի աշխատողների շահերի պաշտպանությունն է: Իրավական կամ այլ ի՞նչ իրավունքներ են Ձեզ վերապահված: Ձեր աշխատելու կարճ ժամանակահատվածում նման նախադեպ եղե՞լ է:

-Մեր օրերում արհմիության հիմնական առաքելությունը, իհարկե, համալսարանի ԱԿ անդամների շահերի պաշտպանությունն է, սակայն այն չի սահմանափակվում միայն դրանով: Արհմիությունը նաև կարևոր դեր ունի աշխատանքային միջավայրի բարելավման, սոցիալական երաշխիքների ապահովման, ինչպես նաև կառավարման գործընթացներում աշխատակիցների ձայնը ներկայացնելու գործում:

Իրավական առումով մեզ վերապահված են մի շարք կարևոր իրավունքներ՝ կազմակերպել կոլեկտիվ պայմանագրերի կնքման բանակցությունները, ներկայացնել և պաշտպանել ԱԿ անդամների աշխատանքային իրավունքները, վերահսկել աշխատանքային օրենսդրության կիրառման ապահովումը, ինչպես նաև հանդես գալ որպես միջնորդ աշխատողի և գործատուի միջև:

Բացի իրավական գործառույթներից, արհմիությունն իրականացնում է նաև սոցիալական և աջակցող ծրագրեր՝ ուղղված աշխատակիցների բարեկեցությանը, առողջությանը և մասնագիտական զարգացմանը:

Չնայած կարճ ժամանակահատվածին, արդեն իսկ ունեցել ենք որոշակի փորձ՝ ինչպես առանձին աշխատակիցներին վերաբերող հարցերի լուծման, այնպես էլ ընդհանուր աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ: Այս գործընթացը շարունակական է և պահանջում է հետևողական, հավասարակշռված և կառուցողական մոտեցում՝ հիմնված երկխոսության և փոխադարձ հարգանքի վրա:

-Ձեր ղեկավարման ամիսներին ի՞նչ նախաձեռնություններով եք հանդես եկել:

-Իմ ղեկավարման ամիսներին առաջնայինը եղել է պահպանել այն դրական ավանդույթների շարունակականությունը, որոնք ձևավորվել էին նախկինում, միևնույն ժամանակ ավելացնել ժամանակի պահանջներին համահունչ նոր մոտեցումներ: Մասնավորապես հանդես ենք եկել մի քանի նախաձեռնություններով՝ ուղղված աշխատակիցների հետ կապի ամրապնդմանը, նրանց խնդիրներին ավելի օպերատիվ արձագանքմանը, ինչպես նաև սոցիալական և մասնագիտական աջակցության ծրագրերի ակտիվացմանը: Փորձել ենք արհմիությունը դարձնել ոչ միայն պաշտպանող, այլ նաև համախմբող հարթակ, որտեղ յուրաքանչյուր աշխատակից կարող է իրեն արժևորված զգալ: Նշեմ, որ բուհի աշխատողների կողմից հատկապես խրախուսվել է բաց և անմիջական հաղորդակցության ձևաչափի ներդրումը՝ պարբերական հանդիպումներ, լսումներ, որտեղ մարդիկ կարողանում են բարձրաձայնել իրենց հարցերը և ստանալ հստակ արձագանք: Սա, ըստ էության, փոքր փոփոխություն էր ձևի մեջ, բայց զգալի ազդեցություն ունեցավ վստահության մթնոլորտի ձևավորման վրա:

Կարճ ժամանակահատվածում իրականացված բազմաբնույթ միջոցառումներին հանգամանորեն կարելի է ծանոթանալ Արհկոմի ֆեյսբուքյան էջում, որտեղ առավել թափանցիկ է երևում մեր գործունեությունը:

Ընդհանուր առմամբ փորձում ենք քայլել շարունակականության և նորարարության հավասարակշռությամբ՝ պահպանելով լավագույն ավանդույթները, բայց նաև ավելացնելով մեր «ձեռագիրը»՝ ավելի կենդանի, բաց և մարդակենտրոն աշխատանքային մշակույթ:

- Արհկոմը տոների առթիվ փոքրիկ, համեստ նվերներով շնորհավորում է աշխատողներին, երբեմն էլ անհատական օգնություն ցուցաբերում խիստ կարիքավորներին: Ի՞նչ եք կարծում, այսօր ՀՊՄՀ աշխատողների համար առաջնայինը սոցիալական հարցերի լուծումն է: Իր միջոցներով արհկոմը ինչքանով կարող է աջակցել, օգտակար լինել:

-Անկասկած, սոցիալական հարցերը աշխատակիցների համար ոչ միայն կարևոր են, այլև հաճախ՝ առաջնային: Մարդը կարող է լիարժեք կենտրոնանալ իր մասնագիտական գործունեության վրա միայն այն դեպքում, երբ իրեն զգում է սոցիալապես պաշտպանված և գնահատված: Փոքրիկ նվերները, ուշադրության նշանները կամ կարիքավորներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը, գուցե նյութական առումով մեծ ծավալ չունեն, բայց ունեն շատ կարևոր հոգեբանական և մարդկային մոտեցման դրսևորում: Դրանք ձևավորում են վստահության, համերաշխության և միասին լինելու զգացողություն:

Իհարկե, արհմիության հնարավորությունները սահմանափակ են, և մենք չենք կարող լուծել բոլոր սոցիալական խնդիրները: Սակայն մեր խնդիրն է լինել զգայուն, արագ արձագանքող և հնարավորության սահմաններում հասցեական աջակցություն ցուցաբերող կառույց: Նույնքան կարևոր է նաև այն, որ կարողանանք բարձրաձայնել այդ հարցերը և անհրաժեշտության դեպքում ստանալ համալսարանի ղեկավարության աջակցությունը՝ ավելի համակարգային լուծումների հասնելու համար:

Այսպիսով, նույնիսկ մեր միջոցների սահմաններում, մենք կարող ենք լինել իրական աջակցող ոչ միայն նյութապես, այլ նաև բարոյապես, ինչը հաճախ ոչ պակաս կարևոր է աշխատակիցների համար:

-Առաջիկայում ի՞նչ ծրագրեր եք նախատեսում իրականացնել և ի՞նչ ուղղություններով՝ սոցիալական, կրթական-մշակութային, այլ...

-Առաջիկայում մեր նպատակն է զարգացնել արհմիության գործունեությունը մի քանի փոխկապակցված ուղղություններով՝ պահպանելով հավասարակշռություն սոցիալական, կրթական և մշակութային նախաձեռնությունների միջև:

Սոցիալական ուղղությամբ նախատեսում ենք շարունակել հասցեական աջակցությունը աշխատակիցներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով կարիքավորներին, ինչպես նաև ընդլայնել առողջապահական և բարեկեցությանը միտված ծրագրերը: Կարևոր ենք համարում, որ յուրաքանչյուր աշխատակից զգա ոչ միայն պաշտպանված, այլև հոգածությամբ շրջապատված:

Կրթական ուղղությամբ ծրագրում ենք կազմակերպել վերապատրաստումներ, սեմինարներ և հանդիպումներ՝ ուղղված ինչպես մասնագիտական զարգացմանը, այնպես էլ իրավական իրազեկվածության բարձրացմանը:

Մեր խնդիրն է, որ աշխատակիցները ոչ միայն ունենան գիտելիք, այլ նաև վստահություն՝ իրենց իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ:

Մշակութային ուղղությամբ նախատեսում ենք հատուկ ուշադրություն դարձնել նաև աշխատակիցների ոչ ֆորմալ շփումներին: Կարևոր ենք համարում, որ կոլեկտիվը ոչ միայն գործնական հարաբերություններ ունենա, այլ հնարավորություն ունենա իրար ավելի մոտիկից ճանաչելու պաշտոնական միջավայրից դուրս: Այսպիսի հանդիպումները՝ համատեղ մշակութային միջոցառումներ, շրջայցեր, ոչ ֆորմալ հավաքներ, նպաստում են վստահության, փոխհամաձայնության և իրատեսականորեն միավորված թիմի ձևավորմանը:

Մենք համոզված ենք, որ ուժեղ կոլեկտիվը սկսվում է մարդկային հարաբերություններից, և նման մթնոլորտի ստեղծումը մեր առաջնահերթություններից մեկն է:

Ընդհանուր առմամբ մեր մոտեցումը մնում է նույնը՝ շարունակականության վրա կառուցելով, բայց նաև նոր շեշտադրումներ ավելացնելով՝ առավել կենդանի, մասնակցային և մարդակենտրոն միջավայր ձևավորելու համար:

Եվ վերջում, հորդորում եմ բոլորին անդամագրվել բուհի արհեստակցական կազմակերպությանը, դառնալ նրա մի մասնիկը: Վստահեցնում եմ՝ փոխադարձ աջակցության և հարգանքի մթնոլորտում ձևավորված հարաբերությունների միջավայրում առավել դյուրին են դառնում անհաղթահարելի խնդիրների լուծումները:

Հրույցը՝ Սիլվա Ասրյանի

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԻՄՔ ՈՒ ՈՒՂԵՆԻՇ Է ԻՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ, ԱՅԼԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ».

Հայարփի Խաչատրյան

- Սիրելի՛ Հայարփի, ի՞նչ դեր է ունեցել Մանկավարժական համալսարանը քո կյանքում:

- Մանկավարժական համալսարանն իմ գիտակցական կյանքի առաջին կարևորագույն հանգրվանն է: Այստեղ ես ոչ միայն ստացա խոր գիտելիքներ բանասիրության (հայագիտության) ոլորտում, այլև սովորեցի մտածել, ստեղծագործել ու սիրել ուսուցանելը: Համալսարանական տարիներն ինձ համար դարձան անհատական ու մտավոր աճի անփոխարինելի նախադուռ: Չափազանց ամուր կապով եմ կապված Մանկավարժական համալսարանի, հատկապես սիրելի բանասիրական ֆակուլտետիս և պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Ավարտելուց հետո ուսումս շարունակեցի հարազատ բուհում որպես Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ: Գիտական ղեկավարս բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն է: Այնպես որ, գիտական առաջին քայլերս և մկրտությունս ևս ստացել եմ հարազատ Մանկավարժականում:

Մանկավարժական համալսարանը ոչ միայն հիմք ու ուղենիշ է իմ մասնագիտական և գիտական զարգացման ճանապարհին, այլև այն հոգևոր ու ստեղծագործական միջավայրը, որը ձևավորեց ինձ որպես գիտակից, ստեղծագործ և պատասխանատու մարդու, դարձավ գիտելիքի և մասնագիտական հմտությունների սկզբնակետ, այն միջավայրը, որի վրա խարսխվեց ստեղծագործական մտածողությունս, արժեքային սկզբունքներս և ուսուցանելու հանդեպ սիրո իմ անմնացորդ նվիրումը:

- Ովքե՞ր են հետք թողել քո ուսումնառության ընթացքի վրա:

- Ուսումնառությանս ընթացքի վրա կարևոր հետք են թողել մեծ մտավորականներ, գիտության անխոնջ մշակ իմ դասախոսները, որոնք իրենց պրոֆեսիոնալությամբ, գիտության ու ուսուցանելու հանդեպ անհատական մոտեցմամբ, գիտելիքի փոխանցման բարձր մակարդակով և մարդասիրական բացառիկ սկզբունքներով մեծապես նպաստել են մտածողությանս, վերլուծական կարողություններիս և բանասիրական հմտություններիս զարգացմանը: Իբրև երախտագետ ու շնորհապարտ սան՝ բարձր եմ գնահատում բանասիրական ֆակուլտետի կրթական միջավայրը և բոլոր դասախոսներիս ջանքերը, որոնք դարձան ինձ համար ուսուցանելու, մտավոր և մասնագիտական ոգեշնչման աղբյուր: Նրանցից ոմանք այսօր ցավոք լուսահոգի են, խոնարհումս նրանց պայծառ հիշատակին:

- Ինչո՞ւ դպրոց չմտար, ճանապարհը քեզ ո՞ւր տարավ. ներկայացրու լրագրողական, խմբագրական, հասարակական գործունեությանդ մասին:

-Աշխատանքային գործունեությունս չսկսեցի դպրոցում դասավանդելով, փոխարենը առանձին անհատ աշակերտների հետ պարապելով ձեռք բերեցի դասավանդման մեծ ու արժեքավոր փորձ: Սովորեցրել եմ տարբեր տարիքի աշակերտների, այդ թվում՝ օտարերկրացիների, որոնք դիվանագիտական առաքելությամբ գտնվում էին Հայաստանում և հետաքրքրված էին հայագիտությամբ, ինչպես նաև Հայաստանից դուրս բնակվող հայազգի երեխաների և ավագ սերնդի ներկայացուցիչների առցանց ձևաչափով դասավանդել եմ հայագիտական առարկաներ: Սա կարևոր ձեռքբերում ու փորձ էր, քանի որ հայերենը հայ բանասերի կողմից որպես օտար լեզու դասավանդելը լուրջ մարտահրավեր է: Այս փորձը թույլ է տալիս ինձ վստահ լինել, որ առաջիկայում կկարողանամ նաև դպրոցում կամ բուհում դասավանդել: Վստահ եմ՝ կգա այդ ժամանակը. մենք բոլորս կյանքի տարբեր շրջափուլերում պարտավոր ենք զբաղվել ուսուցանելու կարևոր առաքելությամբ, քանի որ պարտավոր ենք մեր ստացած գիտելիքները, հմտություններն ու գիտական նվաճումները փոխանցել մեզնից հետո եկող սերունդներին:

Ինչ վերաբերում է լրագրողական, խմբագրական և հասարակական գործունեությանը, թերևս փաստեմ, որ այս ամենը նախասահմանված ընթացք էր, ու ենթադրում եմ, որ շատերի կյանքում է տեղի ունենում այս իրողությունը, երբ ինչ-ինչ հանգամանքներ

Լուսանկարը՝ **Գարեգին Թորոսյանի**

Հայարփի Խաչատրյան
«Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն, գրականագետ

խթան են դառնում կյանքի որևէ շրջափուլում ընթանալ այս կամ այն ուղով:

Տակավին ուսանողական տարիներից թղթակցում էի «Մանկավարժական համալսարան» թերթին, որն այն ժամանակ ևս դու էիր խմբագրում, սիրելի Սիլվա, և երկու տասնամյակից ավելի է, ինչ շարունակում ես քո նվիրական ու արժանապատիվ աշխատանքը: Հարազատ բուհում կամ ֆակուլտետում կարևոր իրադարձությունների և ստեղծագործական տարբեր միջոցառումների մասին նյութերս սիրով հրապարակում էիր «Մանկավարժական համալսարան»-ում, նյութեր էի ուղարկում նաև «Ազգ», «Գրական թերթ», «Հայաստան» թերթերին, ինչպես նաև Սփյուռքի պարբերականներին: Այս ընթացքը շարունակվեց նաև համալսարանն ավարտելուց հետո, երբ մի կարճ ժամանակ աշխատեցի «Հայաստան» թերթում որպես լրագրող: Ամեն ինչ շատ սահուն ու բնականոն ստացվեց: Այնպես որ, միտումնավոր չէր դպրոց գնալու փոխարեն լրագրողական աշխատանքն ընտրելը: Սակայն դա շատ կարճ տևեց:

Հենց լրագրողական տարիներին էր, որ ծանոթացա ճանաչված գրող, թարգմանիչ, գրականագետ, «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի հիմնադիր նախագահ Ֆելիքս Բախչինյանի հետ և հիմնադրամում աշխատելու առաջարկ ստացա: Նոր նախագիծ կյանքի կոչելու նպատակով Պարոն Բախչինյանը աշխատանքային թիմ էր հավաքում. հիմնադրում էր «Մեր Ձորը» շաբաթաթերթը: Գնացի հիմնադրամ՝ աշխատակցելու Լոռվա ձորին նվիրված «Մեր Ձորը» թերթին և սիրով ու նվիրումով մնացի այնտեղ առայսօր:

- Այսօր քեզ ճանաչում են որպես մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի գործունեության տարածման ջատագով. ինչ ձեռքբերումներ կան այդ առաքելության ճանապարհին:

Մերօրյա չափազանց մտահոգիչ, ցնցումնառատ ու խառնակ աշխարհում «Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտ» հիմնադրամում աշխատելը, Ֆրիտյոֆ Նանսեն-հայանպաստ մարդու անունը հանրահռչակելը ոչ միայն պատիվ է, այլև մեծ պատասխանատվություն, մանավանդ երբ առաջնորդվում ես նանսենյան «մերձավորին սիրելը միակ ռեալ հնարավոր քաղաքականությունն է» սկզբունքով: Պատիվ է, քանի որ 2002-ին հիմնադրվել է մեծանուն գրող, թարգմանիչ, գրականագետ, Հայաստանում Ֆրիտյոֆ Նանսենի հայանպաստ գործունեության հանրահռչակման բացառիկ և անխոնջ նվիրյալ, երջանկահիշատակ Ֆելիքս Բախչինյանի կողմից: 2007 թվականից եմ աշխատում «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամում՝ տակավին նոր-նոր ավարտելով համալսարանական ուսումնառությունս, իսկ 2010-ից գործադիր տնօրենն եմ: Ասել՝ կյանքի կարևոր դասերը հիմնադրամում սովորելով ու ավելի պատասխանատվությամբ կյանքի մարտահրավերներին դիմակայելու պատասխանատվությամբ են ընթացել աշխատանքային տարիներս, հավասարազոր է ոչինչ չասելու. «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամը ղեկավարելը գիտակցական կյանքիս կարևոր բաղադրիչն է եղել, կա և կմնա, որը 2020-ից պարոն Ֆելիքս Բախչինյանի որոշմամբ վերանվանվեց «Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտ» հիմնադրամ, քանի որ աշխատանքային գործունեությամբ իրավամբ գիտական-մշակութային ինստիտուտի լուրջ դերակատարություն ունի:

Առհասարակ, պարզ ու անպաճույճ են մարդասերների բանաձևերը, իսկ 20-րդ դարի մեծ մարդասեր և Հայ Դատի անուրանալի պաշտպան Ֆրիտյոֆ Նանսենի անունը կրող կազմակերպությունը, որը հիմնադրել է մեր ժամանակի իսկական գթասրտության նվիրյալ մտավորական Պարոն Ֆելիքս Բախչինյանը, պատվի գործ է:

Հիմնադրամն այս տարիներին ստանձնել է նաև կարևոր առաքելություն. Նանսենի գիտական, մարդասիրական ու հայանպաստ գործունեությունը հանրահռչակելու ուղղությամբ հսկայական գրականություն է հրատարակվել, այդ թվում նաև՝ թարգմանվել տարբեր լեզուներից: Հրատարակչական գործունեության ճանապարհին մասնակցել եմ հարյուրից ավելի գրքերի լույս աշխարհ գալուն՝ սկսած համակարգչային շարվածքից վերջացրած գիտական խմբագրմամբ:

Մասնագիտական գրականություն խմբագրելն ուղղակի այլ հմայք ունի: Էլ չեմ ասում ժամանակակից գրողների մասին Պարոն Ֆելիքս Բախչինյանի հոգածու և ուշադիր վերաբերմունքը, երբ հրատարակության էր պատրաստում գրչընկերների ստեղծագործությունների ժողովածուները, իսկ ես մասնակցում էի աշխատանքային ամբողջ ընթացքին:

Պարոն Բախչինյանի հաջորդ և ցավոք վերջին հավակնոտ ծրագիրը նվիրված էր 2025-ին Ֆրիտյոֆ Նանսենի և իր հանձնախմբի Հայաստան այցելության 100-ամյակին, որը չհասցրեց անձամբ կյանքի կոչել՝ 2024 թ. սեպտեմբերի 10-ին անակնկալ հրաժեշտ տալով երկրային կյանքին: Հոբելյանական տարին նա վերնագրել էր «100 տարի անց Ֆրիտյոֆ Նանսենի ոտնահետքերով» և կազմել ամբողջ ծրագիրը, որը ներառելու էր մի շարք գրական-մշակութային նախաձեռնությունների իրականացում՝ Նանսենի գրքերի հրատարակում, այդ թեմայով մենագրության պատրաստում, փաստավավերագրական ֆիլմի նկարահանում, համահայկական և միջազգային գիտաժողովների կազմակերպում, Նանսենի՝ հայաստանյան թեմաներով լուսանկարչական ցուցահանդեսի կազմակերպում և այլն... Մենք՝ նանսենականներս, Երևանի քաղաքապետարանի ֆինանսական աջակցությամբ, ինչպես նաև տարբեր ընկեր-բարեկամների, այդ թվում՝ ռուսական «Պաուլսեն» հրատարակչության օժանդակությամբ, ջանք ու եռանդ չխնայեցինք հոբելյանական տարվան նվիրված նրա այս մեծ երազանքը իրականություն դարձնելու ուղղությամբ: Ի դեպ ասեմ, որ ծրագրով նախատեսված համահայկական եռօրյա գիտաժողովը անցկացվեց Մանկավարժական համալսարանի հյուրընկալ հարկի ներքո:

Ահավասիկ կարևոր ձեռքբերումն այս է, որ մենք՝ «Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտ» հիմնադրամի և Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի աշխատակիցներս, միասնական ուժերով կարողացանք Պարոն Ֆելիքս Բախչինյանի վերջին մեծ ու նվիրական ծրագիրն իրականություն դարձնել: Առաջիկայի համար ևս ունենք նույնքան նվիրական գրական-մշակութային աննախադեպ ծրագրեր, որոնք կնպաստեն էլ ավելի գունեղ ու բովանդակալից դարձնելու հայաստանյան, հատկապես մայրաքաղաքի մշակութային կյանքը:

- Ե՞րբ է հաջողությունն ուղեկցում մարդուն, ի՞նչ է պետք դրա համար:

- Գուցե փոքր-ինչ ամպագոռգոռ հնչի, սակայն պիտի նշեմ, որ հաջողությունը սիրում է, երբ իրեն նվաճում, ապա վաստակում են: Սեփական փորձով կարող եմ ասել, որ հաջողությունն ու նրան հասնելը, այն վաստակելը տարիների անդուլ աշխատանքի արդյունքում են ընդառաջ եկել և ուղեկցել ինձ: Աշխատանքում ամենօրյա նվիրում. ահա սա է իմ բանաձևը:

- Մանկավարժական համալսարանի հետ հետադարձ կապը. այցելո՞ւմ ես հարազատ բուհ, ի՞նչ համագործակցություն ունես դասախոսների կամ ուսանողների հետ:

- Շուտով կլրանա երկրորդ տասնամյակը, ինչ ավարտել եմ Մանկավարժական համալսարանը, բայց հարազատ բուհի հետ կապս միշտ շատ սերտ ու ջերմ է եղել: Դրան էլ ավելի են նպաստել ասպիրանտուրա ընդունվելս և գիտական ուղիս հարազատ բուհում անցնելը: Այս առումով առանձնակի երախտագիտությամբ եմ նշում «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնը և նրա հիմնադիր-տնօրեն, իմ գիտական ղեկավար Պարոն Սուրեն Դանիելյանի անունը, ով իմ գրական ճաշակ ձևավորելու ճանապարհին կարևոր դերակատարություն ունեցավ: Մշտապես ջերմ ու ամուր է եղել կապս Մանկավարժական համալսարանի հետ, տարբեր միջոցառումների շրջանակներում հարազատ բուհ այցելելը: Օրերս Ֆրանկոֆոնիայի երկամյակի շրջանակում բանասիրական ֆակուլտետում Նանսենին նվիրված «Արշակ Չոպանյանը ցկյանս Նանսենական» թեմայով դասախոսությամբ հանդես եկա: Բուհի մշակութային անցուդարձին մշտապես մասնակցությանս մասին սիրով ու ջերմությամբ եմ փաստում:

- Ինչ նախասիրություններ ունես, ինչն է քեզ հաջողակ կամ երջանիկ դարձնում:

- Նախասիրություններս շատ են. գրական ու առհասարակ բանասիրական աշխատանքից դուրս սիրում եմ սպորտով՝ հատկապես լողով, և ռազմական վարժանքներով զբաղվել, հաճախել քաղաքային հրաձգարան: Հանձնել եմ քննություն ստացել զենք պահելու և կրելու թույլտվություն, ինչը կարևոր ձեռքբերում է մերօրյա իրականությունում:

- Ինչ կմաղթես ուսանողներին ու շրջանավարտներին:

- Այսօրվա ուսանողներին՝ իմ կրտսեր քույրերին ու եղբայրներին, պայծառ ապագա եմ մաղթում հզորացող հայրենիքում: Եվ հարազատորեն ու սրտացավությամբ խորհուրդ եմ տալիս շատ սովորել, լավ սովորել. միակ ու անփոխարինելի ոչ նյութական կապիտալը գիտելիքն է, ինչը մարդու ամենաիրական ու հուսալի բարեկամն է ցանկացած ամենաանհավանական իրավիճակում: Գիտելիքը ուժ է:

Հրույցը՝ Սիլվա Ասրյանի

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Մանկավարժական համալսարանում Կայացավ «Գլուխ գլխի» հարթակում երկրորդ հանդիպումը հանրակրթական դպրոցների տնօրենների հետ: Հանդիպման թեման գերազանցության մշակույթն էր դպրոցում:

Հանդիպմանը մասնակցում էին ոչ միայն դպրոցների տնօրեններ Երևանից ու տարբեր մարզերից, այլև կրթության փորձագետներ, ՀՊՄՀ դասախոսներ, կրթական ոլորտի ղեկավարներ:

Ներկաներին ողջունեց համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը, որն ընդգծեց տվյալ ձևաչափով հարթակի ձևավորման կարևորությունը՝ երկխոսության, փորձի փոխանակման, խնդիրների բարձրաձայնման ու դրանց լուծման ուղիներ գտնելու տեսանկյունից:

ԿԳՄՍՆ հանրակրթության և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Սուսաննա Ազատյանը վստահեցրեց՝ հանրակրթությունը մեծապես կապված է այս բուհի հետ, և չափորոշիչների վերջնարդյունքների համար պատասխանատվություն կրողը դպրոցն ու ուսուցիչն են: Ներկա հարթակը համալսարան-դպրոց երկխոսության համար լավագույն ձևաչափն է, որտեղ ծնվելու են նոր գաղափարներ:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի ղեկավար, ՀՊՄՀ շրջանավարտ Լիլիթ Մնացականյանը ողջունեց հարթակը՝ լավագույն փորձի ներդրման ու կիրառման, անվտանգ ու ապահով կրթություն ապահովելու և դպրոցում բարոյահոգեբանական կայուն միջավայր ստեղծելու տեսանկյունից:

«Դասավանդիր Հայաստան»-ի ներկայացուցիչն էլ կարևորեց կրթության շարունակականությունը, փորձի փոխանակման միջավայրի ստեղծումը և խնդիրների մասին ազատ խոսելու հնարավորությունը ներկա հարթակում:

ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը «Գերազանցության մշակույթ և կարողություններ» թեմայի շրջանակում ակտիվ երկխոսություն ծավալեց տնօրենների հետ՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր դպրոց բացառիկ է, սակայն ներկայացված դեպքը պետք է դիտարկել ընդհանրական համատեքստում:

Ցուցադրված նկարի վերաբերյալ դպրոցների տնօրենները ներկայացրին իրենց տեսակետները, ընդգծեցին դպրոցական տվյալ միջավայրում գերազանցության մշակույթի ձևավորման ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Օրվա բանախոսը Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սյուզաննա Շմավոնյանն էր: Նա ներկայացրեց՝ ինչ է գերազանցության մշակույթը. գերազանցություն՝ չի նշանակում կատարելություն, այլ կրթության շարունակական զարգացում, ընդգծեց՝ ինչու է կարևոր գերազանցության մշակույթը, ինչ հիմնական սկզբունքների վրա է այն ձևավորվում, բուրգի տեսքով ներկայացրեց դպրոցի զարգացման տեսլականը, ժողովրդավարական, համագործակցային և մյուս առաջնահերթությունները, անդրադարձավ դպրոցի կառավարման գործիքներին ու մեխանիզմներին, տնօրենի դերին, որոնք նպաստում են դպրոցում գերազանցության մշակույթի ձևավորմանը:

Սիլվա Ասրյան

ԿՈՉՈՒՄՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Մաթեմատիկայի լույսը

Երևանի Գ. Ստեփանյանի անվան №135 դպրոցում

Մանկավարժությունը մասնագիտություն չէ. այն առաքելություն է, որը պահանջում է անսահման համբերություն, սեր, բազում գիտելիքներ, անմնացորդ նվիրում: Հենց այսպիսին է Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան №135 հիմնական դպրոցի ուսուցչուհին, որը տասնամյակներ շարունակ կրթում և դաստիարակում է սերունդներ՝ բացահայտելով նրանց համար թվերի և տրամաբանության կախարդական աշխարհը:

Ամալյա Շահինյանի մասնագիտական հիմքերը դրվել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում (այժմ՝ համալսարան): Ստացած հիմնարար կրթությունն ու մանկավարժական հմտությունները դարձան այն առանցքը, որի շուրջ հյուսվեց նրա հետագա բեղմնավոր գործունեությունը:

«Մաթեմատիկան միայն թվերը չեն. այն սովորեցնում է մարդուն ճիշտ մտածել և գտնել ելքեր ցանկացած բարդ իրավիճակից»,-սա է նրա կարգախոսը, որով առաջնորդվում է ամեն դասաժամի:

№135 դպրոցի պատերը լավ են հիշում նրա առաջին քայլերը և այն հազարավոր աշակերտներին, որոնք նրա շնորհիվ սիրեցին մաթեմատիկան: Որպես փորձառու մասնագետ՝ նա ոչ միայն փոխանցում է տեսական գիտելիքներ, այլև անհատական մոտեցում է ցուցաբերում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, կիրառում է ժամանակակից մեթոդներ, որպեսզի բարդ բանաձևերն ու թեորեմները դառնան պարզ ու հասանելի, օրինակ է հանդիսանում երիտասարդ գործընկերների համար՝ կիսվելով իր հարուստ փորձով:

Նրա սաներից շատերն այսօր հայտնի մասնագետներ են, որոնք իրենց հիմնարար գիտելիքների համար պարտական են հենց իրենց սիրելի ուսուցչուհուն:

Այսօր էլ նա նույն եռանդով մտնում է դասարան, կավիճը վերցնում ձեռքը և սկսում իր հերթական կախարդանքը՝ մաթեմատիկայի դասը: Նրա ներկայությունը №135 դպրոցում կրթության որակի և մարդկային բարձր արժեքների երաշխիքն է:

Գ. Ստեփանյանի անվան №135 դպրոց

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Մտքերի խաչմերուկում

Մռայլ երեկո է: Դրսի անտանելի քամին ասես ներխուժում է գլուխս և քաոս ստեղծում, խառնում մտքերս այնպես, ինչպես սենյակս կխառներ, եթե պատուհանը բաց թողնեի: Ատում եմ քամու ձայնը:

Փորձում եմ հավաքել մտքերս: Փակում եմ աչքերս ու մի պահ մոռանում այդ քամու մասին: Գլխումս ամեն բան խառն է, թափթփված սենյակիս պես: Իսկ եթե փորձեմ հավաքել: Երբեք չեմ զգացել նման բան: Չգիտեմ՝ որքան կտևի այս ամենը, բայց հիմա ուզում եմ մտքերս հավաքել այնպես, ինչպես իմ սենյակը:

Հետաքրքիր է, պարզվում է՝ չափից դուրս էմոցիոնալ եմ, իհարկե, նկատել էի ավելի վաղ, բայց կարծում էի, թե անցել է: Եթե փորձեմ հավաքել մտքերս ու հույզերս, գուցե գլխումս թեթևություն առաջանա:

Այս փոքր տարածքում ինչ ահռելի գործ կա անելու: Հավաքեցի հույզերս, փորձեցի դասակարգել: Բայց մի բան բացակայում է: Որտեղ է ուրախությունը: Սկսեցի փնտրել այն գլխումս, բայց իսկապես չկա, չեմ գտնում: Մի՞թե ես ուրախ չեմ, այնքան հիշողություններ ունեմ, որոնք ինձ ուրախություն են պատճառել, իսկ հիմա չեմ գտնում այդ ուրախությունը: Որտե՞ղ է թաքնվել:

Իմ դիմաց մի պատ է, որը դուռ չունի, փորձում եմ ձեռքով հարվածել: Չէ, չի ստացվում: Ինչպե՞ս ջարդեմ այս անիծված պատը: Բարկացած՝ ճակատս հարվածեցի պատին ու... այն ջարդվեց: Աչքերս բացեցի ճակատիս հատվածում սուր ցավից: Նայեցի շուրջս հասկացա, որ իմ սենյակում եմ:

«Ահա և ճակատով ջարդեցիր ու անցար պատը, հետո ի՞նչ ես անելու մյուս սենյակում»,- մտածեցի ես:

Լռություն էր: Քամին դեռ դրսում է, բայց այլևս այնքան անտանելի չէ: Հասկացա, որ ներսումս ինչ-որ բան փոխվել է: Պատը կոտրելը դժվար չէր: Դժվարն այն է, որ մյուս կողմում ինձ համար ոչինչ պատրաստ չէ: Հասկացա, որ պատի մյուս կողմը հենց այս է: Եվ այստեղ ես ինքս պետք է կառուցեմ ամեն ինչ ու պետք է գտնեմ իմ սեփական ուրախությունը, որը չգտա ներսում:

Գայանե Միքայելյան
ՀՊՄՀ Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրս

Օդը լիքն էր Կապուտիկյանով...

Ամենայն հայոց բանաստեղծուհու շունչն էր թևածում: 20-ամյա ուսանողուհիներս ընկել էինք մի երազային անկյուն, որտեղ հուշ ու կարոտ կա, որտեղ սերն ու թախիծն են հորդում ամեն մի անկյունից՝ այնքան խնամքով պահվող, ստեղծագործական ուժն ու բարձր ճաշակը վկայող:

Հեքիաթի և իրականության սահմանն է քիչ-քիչ անհետանում՝ թողնելով միայն մի նուրբ ժպիտ: Այդպես կերազեր չքանալ անգամ Ալիսի այն հայտնի պատմության կատուն... Նշանակում է՝ Կապուտիկյանի տուն-թանգարանում ենք:

Մեր դասախոսը՝ Արմենուհի Մուրադյանը, անթաքույց ջերմությամբ ու գորովանքով է Կապուտիկյանին ներկայացնում: Իմանում ենք՝ գործ ունենք հզոր կնոջ և հզոր բանաստեղծուհու հետ:

Մեր դասախոսների հետ զմայլանքով ենք դիտում գրականությունից մեզ հարազատ դարձած այդ կնոջ ճոխ ու բարձրաճաշակ զարդերը. նայում ենք բարի- բարի նախանձով: Ահա մեր առջև են Սիամանթոյի եղեգնյա գրիչը, Իսահակյանի նվիրած գդալների հավաքածուն՝ ոսկեզօծ ու շքեղ:

Մյուս սենյակում խմբված են լուռ, անշարժ, հոգի չունեցող, բայց հոգի կրող այն աղջնակները, որոնց մենք տիկնիկ ենք անվանում: Ամեն երկրից մի տիկնիկ: Մշակույթների ներկապնակ է պահարանում: Բայց հավաքածուի մեջ թանկագինն այն տիկնիկն է, որ Կապուտիկյանն այդպես էլ չունեցավ, որ մանկություն -թռչնի անհաս երազի ու անցողիկ քաղցրության կատարյալ պատկերն է, որ մնաց փոքրիկ Սիլվայի հոգում, բայց կորավ՝ դեռ չգտնված. մի օր էլ ուղղակի խանութի ցուցափեղկին չէր: Մեղավորը Սիլվան էր. ամաչել էր մորն ասել, որ ուզում է ունենալ: Վախեցե՛ք ձեր ցանկություններից... որոնց ծնունդ չտվեցիք:

Պերճափառ ու հիասքանչ նվերներից, յուրահատուկ իրերից հաղթողն էր այն փոքրիկ թախտը, որի վրա Սիլվա տատիկն էր քնում: Նա այդտեղ տաքուկ տնակ էր պատրաստում. հարմար է, չէ՞. շորով ծածկում ես անկյունդ, ու պատրաստ է:

Արի ու տես՝ այս կինը մարգարե էր... Լավ, ի՞նչ էր մտքով անցել, որ չէր կտրել Արցախից նվեր ստացած նուռը: Տագնապն էր դրդել, թե՞ անապական սերը... Հիմա նուռը, Արցախն իր մեջ ամփոփած, մնացել է Սիլվայի սեղանին...

Սիլվա Կապուտիկյանը եզակի անհատականություն է. այնքա՛ն խորաթափանց, ճշմարիտ, անկեղծ ու բարի է նրա էությունը: Ստեղծագործությունն ակամա դառնում է սրտամոտ, ասելիքը՝ անվրեպ, խիզախությունը՝ ոգևորիչ, վարակիչ:

Ամենը, ինչ հանձնեց թղթին, եղավ իր գրչատուփի պես լեցուն, երփներանգ ու մշտամնա: Այո՛, նա եկավ, որ չգնա, այլ մնա ու դառնա մեր գրականության, կնոջական ձեռագրի ամենակարկառուն դեմքը: Այցելությունը մտերմիկ էր, զրույցները՝ խորախորհուրդ, և դրանց արդյունքը՝ անչափ բեղուն:

Շնորհակալ ենք Կապուտիկյանի տուն-թանգարանի տնօրենությանը՝ գրկաբաց ընդունելության համար:

Անծիր շնորհակալություն ենք հայտնում մեր դասախոսներին՝ գրականագետներ Արմենուհի Մուրադյանին, Քնարիկ Աբրահամյանին, Նաիրա Խաչատրյանին: Նրանք իրենց պատրաստակամությամբ, ներքին ու արտաքին հմայքով ավելի լուսավորեցին օրը:

Մեր այցելությունները շարունակական են լինելու, և ուսանողներից շատերը Կապուտիկյանի օջախ են գալու արդեն իրենց աշակերտների հետ՝ կրկին սովորելու, սովորեցնելու և վերապրելու այսօրը: Սիլվա Կապուտիկյանը, որի դիմագծերն անգամ հասուն տարիքում չէին փոխվել, միշտ կենդանի է, միշտ երիտասարդ է իր ստեղծագործությամբ, որ արդի է ցայսօր, որ հավերժական է...

Չարչյան Սուսաննա
Պապիկյան Անի
Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ